**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/18400-2021

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-948-26.04.2021-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 516 - Ա որոշումը:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան

Հեռ. 515685

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-948-26.04.2021-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱ-ՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախագծի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը՝

Քաղաքաշինության բնագավառում վերահսկողական գործառույթները վերապահված են ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին և տեխնիկական հսկողություն իրականացնող իրավաբանական անձանց, որոնց համար նախագծով առաջարկվող կարգավորումները կարող են գնահատվել որպես նպաստավոր պայման (օժանդակող գործիք) ոլորտում խնդիրների բացահայտման համար, համատեղելով շինարարական օբյեկտի տեղում ուսումնասիրության և ակնադիտական վերահսկողության գործառույթները, որոնք սահմանված են մի շարք իրավական ակտերով:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ներկայումս առկա են այն բոլոր արդյունավետ միջոցներն ու մեխանիզմները, որոնք շինարարական աշխատանքների ողջ ընթացքում որակի արդյունավետ տեխնիկական հսկողություն իրականացնելու հնարավորություն են ընձեռում:

Միաժամանակ առաջարկվող կարգավորումները պետական պատվիրատուի կողմից կարող են դիտարկվել որպես պայմանագրով նախատեսված աշխատանքների ընթացքին հետևելու, աշխատանքների իրականացման ընթացքը ժամանակացույցով նախատեսված ժամկետների հետ համադրելու, կապալառու կազմակերպության և ներգրավված աշխատակիցների զգոնությունը, աշխատանքների կատարման արդյունավետությունը և պատասխանատվությունը բարձրացնելու գործիք:

Հաշվի առնելով նշվածը՝ գտնում ենք, որ նախագծով առաջարկվող կարգավորումները կարող են դիտարկվել ոչ միայն օրենսդրական, այլև մի շարք ենթաօրենսդրական փոփոխությունների միջոցով՝ ելնելով այն հանգամանքից, որ քաղաքաշինության բնագավառում գործում են բազմաթիվ նորմատիվ փաստաթղթեր, որոնք անմիջականորեն սահմանում են շինարարական արտադրության կազմակերպման ընթացակարգերը, օրինակ՝ ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերը:

Ներկայումս, առաջարկվում է «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ (Քաղաքաշինական գործունեության վերահսկողությունը) հոդվածում լրացում կատարելու փոխարեն դիտարկել «Քաղաքաշինության մասին» օրենքի 9-րդ (Շինարարություն իրականացնողների իրավունքները և պարտականությունները) հոդվածի լրացումը համապատասխան դրույթով:

Հաշվի առնելով, որ շինարարական օբյեկտները բացի շինարարական հրապարակ լինելուց հանդիսանում են շինարարական աշխատանքներում ներգրավված մարդկանց համար աշխատավայր, ապա վերջինիս շուրջօրյա ձայնագրումը կարող է հանգեցնել մարդու հիմնարար ազատությունների սահմանափակմանը:

Առաջարկում ենք դիտարկել միայն շինարարական հրապարակի տեսա-նկարահանման հնարավորությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ Դավիթ Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (Պ-948-26.04.2021-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-948-26.04.2021-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքաշինության մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26-րդ հոդվածը լրացնել հետեւյալ նոր բովանդակությամբ:

««Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված պատվիրատուների կողմից ձեռք բերվող շինարարական աշխատանքների կատարման ամբողջ ընթացքում Կապալառու կազմակերպությունը շինարարական օբյեկտի տարածքը պետք է համալրի տեսախցիկներով, որոնք պետք է շուրջօրյա տեսանկարահանեն եւ տեսաձայնագրեն ամբողջ շինարարական հրապարակը՝ ընդգրկելով դրա վրա կառուցվող բոլոր տեսակի շինությունները, եւ այդ տեսախցիկներին հասանելիություն պետք է տրվի ինչպես պատվիրատուին, այնպես էլ պատվիրատուի կողմից նշված օգտատերերին: Սույն պահանջը տարածվում է գնումների բազային միավորի 70-ապատիկից բարձր, գաղտնիություն կամ հատուկ ռեժիմ չպարունակող բնակելի, հասարակական, արտադրական, էներգետիկ, տրանսպորտային եւ հիդրոտեխնիկական նշանակություն ունեցող նոր կառուցվող շինարարական օբյեկտների վրա, բացառությամբ գծային ենթակառուցվածքների»:»

Հոդված 2.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Համաձայն ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի հոդված 26-ի Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքաշինական գործունեության բնագավառում պետական տեսչական վերահսկողությունն իրականացնում է տեսչական մարմինը: Տեսչական մարմինն իր գործունեությունը կազմակերպում է վարչատարածքային սկզբունքով՝ տեսչական մարմնի ծառայողների միջոցով:

Կառուցվող օբյեկտների շինարարական- մոնտաժային աշխատանքների, ինչպես նաեւ օգտագործվող շինանյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների եւ ինժեներական սարքավորումների համապատասխանությունը հաստատված նախագծին, գործող նորմերին ու ստանդարտներին ապահովելու համար պայմանագրային հիմունքներով իրականացվում է շինարարության նկատմամբ որակի տեխնիկական հսկողություն:

Այնուհանդերձ պետք է փաստել, որ առկա պրակտիկան բավական նվազ հնարավորություններ է ընձեռում հսկողական ընթացակարգերի կիրառության համար: Ի լրումն, գործնականում շինարարական գործընթացի փաստաթղթերի եւ ակտերի մեծամասնությունը լրացվում են շինարարությունից հետո, ինչը նաեւ ստեղծում է հավելյալ կոռուպցիոն ռիսկեր, ինչպես նաեւ նվազեցնում է վերահսկողության, այդ թվում նաեւ հանրային վերահսկողության հնարավորությունները:

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Հաշվի առնելով շինարարական օբյեկտների հարաճուն ավելացող քանակն ու վերահսկող մարմինների աշխատակազմերի սահմանափակ թվակազմը, իրական ու լիարժեք պետական տեսչական վերահսկողություն իրականացնելն առանց տեխնիկական հատուկ միջոցների կիրառման խնդրահարույց է եւ դժվար իրականանալի: Ավելին, բազմիցս խոսվել է Հայաստանում ստանդարտների պահպանման ու դրանց հետագա բարձրացման մասին, մասնավորապես շինարարության ոլորտում: Նախագծի ընդունումը, կարծում ենք, կմոտեցնի խնդիրների լուծմանը, ինչպես նաեւ հնարավորություն կընձեռի խստացնել հսկողական ընթացակարգերը ստանդարտների պահպանման տեսանկյունից: Ըստ այդմ, որպեսզի հնարավոր լինի շինարարական աշխատանքների ողջ ընթացքում իրականացնել որակի տեխնիկական հսկողությունը եւ անընդհատ պետական տեսչական վերահսկողությունը, առաջարկվող օրենսդրական կարգավորմամբ

Կապալառու կազմակերպությունը իր հաշվին շինարարական օբյեկտի տարածքը պետք է համալրի տեսախցիկներով, որոնք պետք է շուրջօրյա տեսանկարահանեն ամբողջ շինարարական հրապարակը՝ ընդգրկելով դրա վրա կառուցվող բոլոր տեսակի շինությունները, եւ այդ տեսախցիկներին հասանելիություն պետք է տրվի ինչպես պատվիրատուին, այնպես էլ գրանցված օգտատերերին: Սա նաեւ կմեծացնի հանրային հսկողության գործիքակազմերը, երաշխավորելով որակական ստանդարտների ապահովման գործընթացը:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման պարագայում տեսահսկման մշտադիտարկման եւ ամբողջական տեսանկարահանման կիրառումը հնարավորություն կտա լիարժեք ապահովել շինարարական հրապարակներում իրականացվող քաղաքաշինական գործունեության նկատմամբ պետական տեսչական վերահսկողությունը, նպաստելով նաեւ հանրային վերահսկողությանը: Ի լրումն, սա հնարավորություն կընձեռի աստիճանաբար անցում կատարել էլեկտրոնային հասարակությանը, նվազեցնելով հնարավոր կոռուպցիոն ռիսկերը, որոնք թերեւս առկա են ներկա փաստաթղթաշրջնառության կառուցակարգերում: